«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Ռաֆֆու «Խենթը» վեպի ուսուցման մեթոդիկան

Առարկա՝ Հայ գրականություն

Ուսուցիչ՝ Թորոսյան Գայանե

Դպրոց՝ «Երևանի Խ.Դաշտենցի անվան թիվ 114 ավագ դպրոց» ՊՈԱԿ

Ղեկավար՝ Թամարա Թովմասյան

ԵՐԵՎԱՆ – 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....3

ԳԼՈՒԽ 1.ԿՐԹԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

1.1 Ինտերակտիվ/փոխներգործուն ուսուցման տեխնոլոգիան՝ որպես կարողունակահեն ուսուցման բաղադրիչ.....6

1.2 Փոխներգործուն մեթոդական հնարների կիրառումը «Հայ գրականություն» առարկայի դասավանդման ընթացքում.....11

ԳԼՈՒԽ 2. ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵՐ ՓՈՐՁԻՑ

2.1 «Խենթը»: Գեղարվեստական արժեքը, ուսուցումը դպրոցում.....13

Եզրակացություններ.....20

Օգտագործված գրականություն.....21

Ներածություն

Կրթական համակարգում իրականացվող ներկայիս փոփոխությունները, բարեփոխումներն ու բարելավումները նպատակ ունեն.

- նպաստել կրթության որակի բարձրացմանը
- սովորողների հետաքրքրությունն ու մոտիվացիան դեպի դասն ուղղելուն
- նպաստավոր պայմաններ ստեղծել վերջիններիս աշխատունակության, առաջադիմության խթանման համար

Հենց այս նկատառումներից ելնելով՝ հանրակրթության մեջ նախապատվություն է տրվում ուսուցման կարողունակահեն մոդելին, ինչը ենթադրում է ոչ միայն գիտելիքի փոխանցում, այլև՝ սովորողների մեջ առանցքային կարողունակությունների ձևավորում: Ակնհայտ է, որ կրթական բարեփոխումները մեր կրթական համակարգում օրախնդիր էին, քանզի ուսուցման ավանդական մոդելն այլևս ունակ չէ բավարարելու սովորողների կրթական կարիքները, հետաքրքրելու և ոգևորելու նրանց: Սովորողն ինքն է հաճախ պահանջում, որ ուսուցիչը վերանայի դասավանդման իր մոտեցումները, դասը հագեցնի շարժուն ու ակտիվ բաղադրիչներով, որտեղ ինքը դուրս է կարմիր գծերից, կարող է ինքնուրույն գործել, հավաքել, մշակել, ներկայացնել տեղեկատվությունը՝ այն դարձնելով մնայուն գիտելիք: Հենց այստեղ է, որ ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների մուտքը հանրակրթական համակարգ կարող է էապես ազդել կրության որակի վրա՝ վերանայելով սովորողների դերն ուսումնական գործընթացում: Ըստ էության՝ բարեփոխումների հիմնական ու կարևոր դրդապատճառը սովորողների մոտ կայուն գիտելիքների, հմտությունների, արժեքների ու դիրքորոշումների ձևավորման համար առավել նպաստավոր պայմանների ստեղծումն է:

Այսպիսով, ուսումնական գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու միտումը կրթական համակարգի շահառուներին դրդել է գնալ կրթական նորարարությունների հետևից, առավել արդյունավետ կառավարման մեխանիզմներ մշակել, մշտադիտարկել միջազգային օրինակելի փորձը, որոնցից հաջողվածները տեղայնացնել ՀՀ հանրակրթական համակարգում:

Նոր կրթական պահանջների տրամաբանության մեջ է նաև «Հայ գրականություն» ուսումնական առարկայի դասագործընթացի վերափոխումն ու արդիականությունը: Հատկապես գեղարվեստական արձակ գործերի ուսումնասիրության ժամանակ պասիվ ու ձանձրալի միջավայրից խուսափելու անհրաժեշտությունից է բխում դասի պլանավորման հիքում դասավանդման ժամանակակից տեխնոլոգիաների տեղայնացումը: Հենվելով մեր մանկավարժական փորձի վրա՝ նկատենք, որ բավականին լայն հնարավորություններ է ընձեռում ուսուցման ինտերակտիվ մոդելը: Այս կերպ սովորողը հնարավորություն է ստանում առավել ինքնուրույն ու կառուցողական լինել, դուրս գալ պասիվ լսողի իր ավանդական դերից, համագործակցել ինչպես ուսուցչի, այնպես էլ՝ դասընկերների հետ: Արդյունքում՝ դասարանում ձևավորվում է համագործակցային առողջ միջավայր, որտեղ կա մրցակցություն, ինքնուրույն հետազոտելու, հորինելու, ստեղծագործելու և նախաձեռնելու հնարավորություն:

Գրականության դասավանդման շրջանակներում նույնպես սովորողը պետք է լինի դասապրոցեսի գործընկերային կողմ: Ավանդական դասին բազմանդամ դասարաններում ֆրոնտալ հարցմամբ խոսքի հնարավորություն տալով մի քանի սովորողի՝ նշանակում է ուսուցիչն ուղղակիորեն «զրկում է» մյուսներին խոսելու ու հաղորդակցվելու, կարծիք ու դիրքորոշում, վերաբերմունք արտահայտելու հնարավորությունից: Իսկ ահա փոխներգործուն մեթոդական համակարգի ներդրումը մեծապես կարող է նպաստել սովորողների համընդհանուր մասնակցությանը դասին: Խմբային, համագործակցային աշխատանքների իրականացումը թույլ կտա, որ հատկապես արձակ գործերի ուսումնասիրման ժամանակ դասարանում սովորողների մասնակցությունը լինի համաչափ, որևէ սովորող չմնա ազատ, բոլորը հնարավորություն ունենան մասնակցել դասին, քննարկումների մեջ մտնել, խոսել ու գործել: Այս մոտեցումը, կարծում ենք, բավականին արդյունավետ կարող է անդրադառնալ սովորողների աշխատունակության, առաջադիմության բարձրացման և առանցքային կարողունակությունների ձևավորման վրա:

Հետազոտության թեմայի արդիականությունը: Հետազոտության արդիականությունը պայմանավորված է դասապրոցեսին և մասնավորապես «Հայ գրականություն» ուսումնական առարկայի դասավանդման ընթացքում փոխներգործուն

մեթոդների կիրառման անհրաժեշտությամբ, որից կախված է սովորողների առաջադիմությունն ու համաչափ մասնակցությունը դասին:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել գրականության դասի ընթացքում ուսուցչի կողմից կիրառվող փոխներգործուն մեթոդների ազդեցությունը կրթության որակի բարձրացման, դասի ժամանակ սովորողների դերի վերարժևորման, մասնակցելիության համաչափության պահպանման համատեքստում:

Հետազոտության խնդիրը.

- Ցույց տալ փոխներգործուն մեթոդական համակարգի դերը սովորողների աշխատունակության բարձրացման ու առաջադիմության վրա:
- Կարևորել գրականության դասաժամին սովորողների համագործակցությունը միմյանց հետ՝ որպես մի շարք կարողունակությունների զարգացման նախապայման:
- Մատնանշել ուսուցչի նախաձեռնող ու նորարար լինելու հանգամանքը սովորողների առաջադիմության, ինքնուրույնության ու մոտիվացված լինելու տեսանկյունից:
- Դիտարկել Ռաֆֆու «Խենթը» վեպի գեղարվեստական, ուսումնադաստիարակչական արժեքը:
- Վեր հանել Ռաֆֆու «Խենթը» վեպի ուսուցման ընթացքում կիրառվող փոխներգործուն մեթոդական շղթայի արդյունավետությունը:

Հետազոտության ընթացքում գործադրված մեթոդները՝

1. գիտամեթոդական գրականության ուսումնասիրություն և վերլուծություն
2. դասալսումներ և վերլուծություններ
3. փորձարարական դասերի վարում

ԳԼՈՒԽ 1

ԿՐԹԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

1.1 Ինտերակտիվ/փոխներգործուն ուսուցման տեխնոլոգիան՝ որպես կարողունակահեն ուսուցման բաղադրիչ

Այսօր ուսուցման մեթոդները պայմանականորեն բաժանվում են երկու խմբի՝ *ավանդական և փոխներգործուն (ինտերակտիվ):*

Ավանդական են բացատրական, զննական այն մեթոդները, որոնց հիմքում ընկած են պատրաստի տեղեկատվության, գիտելիքի պարզ փոխանցումը սովորողին ֆ վերջինիս կողմից դրա պարզ վերարտադրումը:

Փոխներգործուն մեթոդների հիմքում սովորողի ինքնուրույն ուսումնական գործունեությունն է, ինչպես նաֆ գիտելիքի ձեռքբերման ընթացքին նրա անմիջական ու գործուն մասնակցությունը:

Բազմաթիվ հիմնական մեթոդական նորարարություններ այսօր կապվում են ուսուցման ինտերակտիվ մեթոդների կիրառման հետ: Սակայն նկատենք, որ չկան ինտերակտիվ մեթոդների արդյունավետ կիրառման բանաձևեր, ցանկացած դասարան, դասապրոցես եզակի է, անկրկնելի: Ուսուցչի խնդիրն է ընդհանուր սահմանված մեթոդը հարմարեցնել եզակի իրավիճակին: Այս մեթոդները նպաստում են խոսքային մշակույթի զարգացմաը, ինքնագնահատականի ձևավորմանը, ինչպես նաև սովորողի մոտ վեր են հանում ինքնուրույնությունը, մեծացնում են հետաքրքրությունը առարկայի նկատմամբ:

Դասավանդման ինտերակտիվ կամ փոխներգործուն մեթոդները կարելի է համարել ակտիվ մեթոդների առավել ժամանակակից ձև: Ինտերակտիվ ուսուցումը երկխոսությամբ ուսուցում է, որի ընթացքում սովորողները համագործակցում են ոչ միայն դասավանդողի, այլև՝ միմյանց հետ: Ինտերակտիվ ուսուցման ժամանակ ուսուցիչը նոր գիտելիքներ փնտրելու իր հանձնարարություններով սովորողներին ուղղորդում է անկախ հետազոտությունների կատարմանը: Այսպիսով, կարելի է փաստել, որ փոխներգործուն

մեթոդների կիրառումը կարող է նպաստել, որ սովորողը պասիվ դաշտից դուրս գա, մշտապես ունենա զբաղվածություն, համագործակցի դասընկերների հետ, ինչն էլ թույլ կտա որ վերջիններիս մոտ ձևավորվի կոլեկտիվ մտածողություն, դժվարությունները թիմային աշխատանքով հաղթահարելու կարողություն:

Ինտերակտիվ մեթոդներով պլանավորված դասագործընթացի ժամանակ ուսուցչի ֆունկցիաներն են՝

- Բացատրել սպասվելիք աշխատանքի նպատակը: Դասի սկզբում հայտարարել թեման ֆ քննարկվող հարցերը:
- Բաժանել սովորողներին խմբերի ֆ տալ հանձնարարություններ:
- Չթողնել առանց ուշադրության սխալ մեկնաբանությունները, սակայն միևնույն ժամանակ միանգամից չտալ ճիշտ պատասխանը:
- Հետևել, որ քննադատվի միտքը, կարծիքը, այլ ոչ թե միտքը արտահայտող ուսանողը:
- Օգնել սովորողներին գալ ընդհանուր եզրահանգման ֆ դասի վերջում անել եզրակացություններ, որոնք ունեն պրակտիկ ֆ ընդհանուր նշանակություն:

Այս մեթոդների կիրառումը դասավանդման ընթացքում մեծապես կօգնի սովորողների սովորել սովորելու կարողունակության ձևավորմանը: «Այս կարողության ձևավորումն իրենից ենթադրում է, որ սովորողներն ինքնուրույն և մյուսների հետ համատեղ արդյունավետ սովորում և աշխատում են կյանքի տարբեր իրավիճակներում: Նրանք ճանաչում են իմացածի և չիմացածի սահմանները: Սովորողները ինքնակազմակերպվում են և ձևավորում են ժամանակի արդյունավետ կառավարման հմտություն: Նրանք կարողանում են գնահատել սեփական և մյուսների ֆիզիկական ու հոգեբանական հնարավորությունները, սովորում են աշխատել ծանրաբեռնվածության պայմաններում: Սովորելու ընթացքում աշակերտները ձևավորում են իրողությունները քննադատաբար և բազմակողմանի ուսումնասիրելու, վերլուծելու, ինչպես նաև ստեղծագործական ու նորարար մոտեցումներ կիրառելու ունակություններ: Սովորողները ձևավորում են համակարգային և ինտեգրված մտածողություն[1]:

[1] https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788 ՀՀ Կառավարության որոշում:

Ինտերակտիվ կամ փոխներգործուն մեթոդներն ուղեկցվում են ուսուցիչ-սովորող և սովորող-սովորող փոխազդեցությամբ: Տեսական և գործնական աշխատանքները կատարվում են սովորողների անմիջական մասնակցությամբ, նրանց ճանաչողական գործունեությամբ: Այս ընթացքում ուսուցիչը պետք է անի առավելագույնը, որպեսզի կարողանա հստակ կերպով իրականացնել կրթելու ու դաստիարակելու իր գործառույթը, և այդ գործառույթը լինի որակապես բարձր, համապատասխանի կրթության բարձր որակի առկա չափանիշներին: «Մանկավարժական աշխատողը պարտավոր է նպաստել ուսումնական հաստատությունում սովորողների կողմից հանրակրթական (հիմնական և լրացուցիչ) ծրագրերի յուրացման և առարկայական չափորոշիչների ապահովման գործընթացին, ինչպես նաև ուսուցման մեթոդների կիրառման միջոցով համապատասխան գիտելիքների, հմտությունների ձեռքբերմանը, արժեքային համակարգի ձևավորմանը, իրականացնել հանրակրթական ծրագրերը»[2]:

Ներկայիս սովորողը ապագա ուսուցիչն է, քաղաքական ու հասարակական գործիչը, լեզվաբանն ու գիտնականը, ուստի աներկբա է, որ հասարակությանն անհրաժեշտ են անհատներ, ովքեր ունակ են սովորել, սովորեցնել, ինքնուրույն լինել անկախ տարիքից, գործողությունների և որոշումների կայացման հարցում ևս պատրաստ լինել: Այս համատեքստում կարելի է պնդել, որ հաջողությունը պայմանավորված է ոչ թե գիտելիքի քանակով, այլ դրանք դրսևորելու և օգտագործելու կարողությամբ: Նաև հենց այս նկատառումներից ելնելով՝ հարկավոր է շեշտը դնել սովորողի անկախության, համագործակցության պատրաստակամության, երկխոսություն վարելու ունակության, ստեղծագործական գործունեության կարողության զարգացման, նաև՝ առանցքային կարողունակությունների ձևավորման վրա, ինչի համար մեծագույն խթան կարող են հանդիսանալ փոխներգործուն մեթոդների կիրառությամբ պլանավորված դասերը: Շատ կարևոր է ուսուցչի մոտեցումը, քանի որ նրա մեթոդական զինանոցն ուղղակի կերպով կարող է ազդել սովորողի ակտիվության վրա, դնել նրան շարժման մեջ, ինչն էլ ուղիղ համեմատական է արդյունավետ վերջնարդյունքին: «Դասին նախապատրաստվելու տեխնոլոգիան ենթադրում է նպատակի հետ կապված չորս խնդրի լուծում: Որոշել դասի մանկավարժական նպատակը՝ ելնելով դասանյութի հնարավորությունից: Աշակերտի համար որոշել մի այնպիսի ուսումնական գործունեություն, որի դաստիարակչական

[2] «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 27, կետ 3:

արդյունքը ուսուցչի նպատակն է, այսինքն՝ ուսուցիչն իր նպատակին կարող է հասնել աշակերտի այդ գործունեության միջոցով: Աշակերտի համար էլ պետք է որոշել մի այնպիսի նպատակ, հանուն որի նա կամավոր է ընդգրկվելու ուսուցչի նախապատրաստած այդ գործունեության մեջ: Նպատակը որոշելուց հետո պետք է մտածել աշակերտի գիտակցության մեջ այն առաջացնելու մասին: Վերջին խնդրի լուծումն ուսուցիչը կարող է ապահովել արդեն ուսուցման մեթոդների միջոցով[3]»: Ուսուցման փոխներգործուն մոդելը նպատակ ունի ձևավորել ուսուցման այնպիսի պայմաններ, որոնցում բոլոր սովորողներն ակտիվորեն փոխգործակցում են: Այս մոդելը ենթադրում է նաև կենսական իրավիճակների մոդելավորում, դերային խաղերի կիրառում, տեղեկատվական հոսքերի ներթափանցում սովորողների գիտակցության մեջ, որոնց շնորհիվ իրականանում է սովորողների ակտիվ գործունեությունը: Այս մեթոդներով պլանավորված գրականության դասը կարող է զարգացնել թե' սովորողների ընթերցելու, վերաշարադրելու, վերապատմելու կարողությունները, թե' նպաստել խոսքային մշակույթի ձևավորմանը, թե' բառապաշարի հարստացմանը: Դասավանդման փոխներգործուն մեթոդի առավելություններից է նաև այն, որ դասարանում պասիվ սովորողն չի մնում. բոլորն աշխատանքի և ակտիվ գործունեության կիզակետում են:

Փոխներգործուն տեխնոլոգիաները և մեթոդները բազմազան են՝ աշխատանք փոքր խմբերում՝ զույգերով, փոխատեղվող եռյակներով, կարուսելի մեթոդ, զրույց, դաս-սեմինարներ, մտքերի փոխանակություն, բանավեճ, գործարար խաղեր, համագործակցային, մոդելավորման տեխնոլոգիաներ կամ նախագծեր և այլն: Դասավանդման նմանօրինակ մոտեցումները զարգացնում են դպրոցականի պատկերավոր, քննադատական մտածողությունը, շարժում վերջինիս հետաքրքրությունը, դասը դարձնում շարժուն, դինամիկ: Փոխգործուն մեթոդները թույլ են տալիս, որ դասի փուլերը լինեն հստակ, միևնույն ժամանակ տրամաբանորեն շարունակեն միմյանց: Անչափ կարևոր է սովորողին ցանկացած պարագայում զերծ պահել մեխանիկական վերարտադրումից: Հարկավոր է, որ սովորողը խորքային ընկալի գաղափարը: Այս նպատակին հասնելու համար ուսուցչին օգնության է գալիս կարողունակությունների

[3] Ս. Պ. Մանուկյան, «Մանկավարժական և աշակերտական դասանպատակները», Երևան, 2003, էջ 151-152:

ձևավորմանն ուղղված կրթությունը, որն ուղղված է սովորողի կողմից ուսումնառության և դաստիարակության գործընթացում ձեռք բերված գիտելիքի, արժեքների, հմտությունների և դիրքորոշումների հիման վրա ըստ իրավիճակի արդյունավետ ու պատշաճ արձագանքելու ձևերի ուսուցմանը: Կարողունակությունները ձևավորվում են սովորողի ուսումնառության ընթացքում ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի, սովորողի կողմից ուսումնական առարկաների ծրագրերի բովանդակության յուրացման, ինչպես նաև ուսուցման գործընթացում դաստիարակության միջոցով և բխում են հանրակրթության հիմնական նպատակներից[4]: Ավանդական դասի ընթացքում սովորողները պասիվ են, հիմնականում լսում են, կարողունակությունների ձևավորմանն ուղղված դասի ընթացքում հնարավորություն ունեն հարցեր տալու, կարծիք հայտնելու[5]:

Այսպիսով, վերահաստատենք մեր պնդումն առ այն, որ սովորողի առաջադիմության բարձրացումը, ուսումնառության ընթացքում հաջողությունները պահանջում են դասի կառուցվածքի փոփոխություններ, որոնց շնորհիվ սովորողը կտառնա դասապրոցեսի կենտրոնական սուբյեկտը: Հետքրքրասեր, բացահայտող, հետազոտող, ինքնուրույն ու նախաձեռնող սովորողն ունակ է հասնել մեծագույն հաջողությունների, ուստի և ուսուցիչը պետք է գնա նորարարությունների հետևից՝ ապահովելով այնպիսի ուսումնական միջավայր, որտեղ սովորողը կարող է անկաշկանդ ինքնադրսևորվել, սովորել, սովորածը կիրառել, պատմել սովորածի մասին, սովորեցնել, եզրահանգումներ ու դատողություններ կատարել:

1.2 Փոխներգործուն մեթոդական հնարների կիրառումը «Հայ գրականություն» առարկայի դասավանդման ընթացքում

Սույն ենթագլխում կդիտարկենք փոխներգործուն մեթոդների դերն ու արդյունավետությունը «Հայ գրականություն» առարկայի դասավանդման շրջանակներում: Առանձնացրել ենք 7-րդ դասարանի ծրագրային նյութեր՝ հաշվի առնելով, որ նշված

[4] ՀՀ Կառավարության՝ 08.04.2010 թվականի թիվ 439-Ն որոշում:

[5] Մասնակցային մշակույթ և կոմպետենցիաների վրա հիմնված ուսուցում, ռեսուրս գրքույկ, Երևան, 2020:

դասարանում տեղի է ունեցել դասագրքերի, չափորոշիչների փոփոխություն, որոնց առանցքում կարողունակահեն կրթությունն է: Եվ այսպես, կդիտարկենք փոխներգործուն մեթոդական հնարների տեղայնացման հնարավորությունները Մուրացանի «Հասարակաց որդեգիրը» և Ստ. Զորյանի «Ջրհորի մոտ» պատմվածքների ուսուցման օրինակներով:

«Խմբային քննարկումների» մեթոդ

Խմբային քննարկումների օգնությամբ սովորողները հաջորդաբար կներկայացնեն պատմվածքի բովանդակությունն ու գաղափարը, կանդրադառնան լեզվին, պատկերավորման միջոցներին և արտահայտամիջոցներին: Հաջորդիվ նախօրոք կազմած 3 խմբերին կհանձնարարվի պատմվածքից դուրս գրել խոսքային հոմանիշները, մակդիրները, փոխաբերությունները, չափազանցությունը/գրոտեսկ/, նորաբանություններն ու օտարաբանությունները: Խմբերը կաշխատեն ինքնուրույն, ուսուցիչը չի միջամտի աշխատանքին: Հաջորդիվ ամեն խմբի կտվի ժամանակ՝ իր աշխատանքը ներկայացնելու համար:

«Համաշխարհային սրճարան» մեթոդ

Պատմվածքի գաղափարն առավել խորքային ուսումնասիրելու համար կկիրառվի «Համաշխարհային սրճարան» մեթոդը: Կերպարների բարոյական նկարագրի շուրջ բանավեճի միջոցով ընդհանուր եզրահանգումներ կատարելը կօգնի, որ սովորողների մասնակցությունը լինի համաչափ, և նրանք հնարավորություն կունենան կարծիք և վերաբերմունք հայտնելու:

«Խմբային հարցադրումների» մեթոդ

«ՀԱՍԱՐԱԿԱՑ ՈՐԴԵԳԻՐԸ»

1) Ո՞վ է Գևորգը:
2) Ի՞նչ երազանքներ ուներ Գևորգը:
3)Ի՞նչ դեր կատարեցին մեծահարուստները Գևորգի կյանքում:
4) Ինչու Գևորգը այլևս չվերադարձավ Գուստավի արհեստանոց:
5) Ի՞նչ կփոխվեր Գևորգի կյանքում, եթե մեծահարուստները կատարեին իրենց խոստումը:
6) Ի՞նչ կփոխվեր Գևորգի կյանքում, եթե մեծահարուստները չհանդիպեին նրան:
7) Ի՞նչ խորհուրդ կտայիք Գևորգին, եթե հանդիպեիք նրան:

«ՋՐՀՈՐԻ ՄՈՏ»

1) Քեզ ավելի շատ դուր եկավ պատմվա՞ծքը, թե՞ դրա հիման վրա նկարահանված ֆիլմը:
2) Կարո՞ղ ես մատնանշել «Ջրհորի մոտ» պատմվածքի և համանուն ֆիլմի՝ քո կողմից նկատված տարբերությունները:
3) Պատմվածքն բաժանի՛ր 3 մասերի և դի՛ր համապատասխան վերնագրեր:
4) Ինչպե՞ս է ճգնաժամային իրավիճակում զինվորների մեջ հանկարծ արթնանում բնության սովորական զավակը, և ինչո՞ւ է մի պահ մոռացվում պատերազմը:
5) Ի՞նչ ես կարծում՝ այստեղ բուն պատերազմը մարտի՞ դաշտում է, թե՞ հանգամանքների բերումով ջրհորի մոտ հավաքված բազմազգ զինվորների հոգիներում:
6) Ինչո՞ւ էին զինվորները սիրում ու հարգում վաշտի ռուս հրամանատարին: Ո՞րն է նրա արտաբերած նախադասության՝ «Լավ չի՞, երբ մարդիկ էսպես մոտիկ բարեկամ են իրար» նախադասության թաքնված իմաստը:
7) Ինչպե՞ս կբնութագրես կապիտանի նենգ արարքը:
8) Ինչո՞ւ զինվորները պատժեցին մատնիչին: Դու ինչպե՞ս կվարվեիր:

Մեթոդական սույն շղթայի կիրառումը միջին դպրոցում գրականության դասին թույլ կտա ուսուցչին ոչ միայն ստուգել նախկինում յուրացված գիտելիքների աստիճանը, խթանել վերլուծական մտածելակերպը, զարգացնել և ամրապնդել ձեռք բերվածը, այլև բարձրացնել աշակերտների ներգրավվածության աստիճանը: Այստեղ կարելի է համոզմունք հայտնել այն հարցի շուրջ, որ սովորողի ներգրավվածությունը դասին մեծապես ապահովում է ուսուցման դրական որակի առաջընթացը: Փոխգործուն մեթոդների նպատակային կիրառությունը, որոնք կարող են սովորողի համար ապահովել հոգեբանորեն ապահով միջավայր, խրախուսում են ստեղծագործական և քննադատական մտածելակերպի զարգացումը, բառապաշարի հարստացումը, զարգացնում են լեզվամտածողությունը, բարձրացնում են սովորողների ինքնավստահությունը: Այսպես ուսուցչի մասնակցությունը դասին էապես նվազում է: Թվարկված մեթոդներով ուսուցման օրինակները գալիս են փաստելու, որ ինտերակտիվ ուսուցման շրջանակներում, որտեղ սովորողները գործակցում են ոչ միայն ուսուցչի, այլ նաև միմյանց հետ, բավականին արդյունավետ են կրկնության, նյութի ամրապնդման և ամփոփման համար:

ԳԼՈՒԽ 2

ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵՐ ՓՈՐՁԻՑ

2.1 «Խենթը»: Գեղարվեստական արժեքը, ուսուցումը դպրոցում

«Դժվար թե մի ուրիշ վիպագիր այնքան հասարակական նշանակություն ունենա, որքան ունեցավ նա, որը մարմնավորեց իր հեղինակությունների մեջ մի ամբողջ ոգին, տենդենցները, կրքերը»: *Շագարոս Ագայան*

Ռաֆֆին իր գրական կյանքը սկսել է 19 –րդ դարի 50-ական թվականների վերջերից՝ իր ավանդը բերելով հայկական գեղարվեստական արձակի աննախընթաց բարձրությանը: Նրա երկերն իրենց մեջ կրում են ժողովրդի՝ մասնավորապես գյուղացիության շահերի բուռն պաշտպանությունը, հայրենիքի փրկության ու հարատևության գաղափարախոսությունը: Վիպասանն իր երկերով ի ցույց է դնում հասարակական կյանքը, ներգործում է նրա վրա և, կյանքում եղած բացասական կոմերը խարազանելով, հնարավորություն է ընձեռում գալիք սերունդներին դասեր քաղել: Մեծ վիպասանն այն համոզումն ուներ, թե ազգային առաջընթացին ուղղված ամեն մի նախաձեռնություն իրականացնելիս նախ պետք է ճանաչել այդ ազգը իր բարքերով, կենցաղով, հակասություններով, տնտեսական ու հոգևոր կացությամբ: Եվ պատահական չէ, որ վերջինս ասել է. «Հայրենասիրությունը սկսվում է հայրենագիտությունից»:

Հիրավի, զարմանք են հարուցում Ռաֆֆու գործունեության լայն մասշտաբները, նա իսկապես մարտնչող հրապարակախոս էր , առաջադեմ մտածող, հայրենասեր ու հայրենանվեր գործիչ: Միանգամայն ճշմարիտ է Պարույր Սևակի այն

գնահատականը, թե «Սիամանթոյի համար քիչ է գալիս «բանաստեղծ» ածականը, ինչպես որ Ռաֆֆու համար՝ «գրող» մակդիրը»[6]:



Բարձր տաղանդով ու անսահման հայրենասիրությամբ գրված նրա երկերը՝ «Սամվել»-ը, «Դավիթ Բեկ»-ը, «Կայծեր»-ը, «Ոսկի աքաղաղ»-ը «Խենթը» և մյուսները, հայ ժողովրդի ներկա ու անցյալ կյանքի հանրագիտարան են, ազատության ու հայրենասիրության դաստիարակության դպրոց նաև այսօրվա մատաղ սերնդի համար: Գրականության մեջ գաղափարների ու գեղարվեստականության փոխհարաբերության մասին Ռաֆֆին ուներ իր անխախտ համոզմունքը, ըստ որի՝ «Վեպի հիմնական գաղափարը չէ կարելի ցույց տալ նրա այս և այն տողերի, նրա այս և այն գլխի մեջ: Վեպի հիմնական գաղափարը տարածվում է, միախառնվում է նրա ամբողջության հետ, որպես հոգին մարմնի հետ: Եվ դրա մեջն է նրա կենդանությունը»[7]: Ռաֆֆու հերոսների իսկական հմայքը նրանց

[6] Սնակ Պ., Երկեր 3 հատորով, հատ. 3, Եր., «Սովետական գրող», 1983, էջ 84:
[7] Ռաֆֆի, Պ. Հայկունու կրիտիկան և «Կայծերը», էջ 437:

գիտակցված անձնազոհությունն է՝ հանուն ժողովրդի, հայրենիքի և ազատության, որով լցված է նրանց ողջ էությունը՝ իբրև բարձրագույն սկզբունք և նպատակ: Այսպիսով՝ Ռաֆֆու հանրահայտ երկերը, հայության կյանքի ու ճակատագրի հզորագույն արտահայտիչը լինելով, Ա. Չոպանյանի արտահայտությամբ՝ նրա համար ապահովել են «Հայոց «ազգային վիպասանը» կոչվելու» իրավունքը[8]:

Մեծարժեք է նաև Ռաֆֆու «Խենթը» վեպը: Հայ ազգային-ազատագրական շարժման վերելքը, կապված 1877-1878 թվականների ռուս-թուրքական պատերազմի իրադարձությունների հետ, ամբողջ խորությամբ բացահայտեցին Ռաֆֆու ստեղծագործական տաղանդի հնարավորությունները: Ռաֆֆին առաջադրում է ազգային-ազատագրական պայքարի գաղափարը՝ արևմտահայ ժողովրդի գլխավոր խնդիրը համարելով այդ գաղափարի «անդադար և անընդհատ նախապատրաստությունը»: Այս ծրագրի գեղարվեստական արտահայտությունը հանդիսացավ նաև «Խենթը» վեպը, որը նա գրեց 1881 թվականին: Գլխավոր հերոսը Վարդանն է, ում նախատիպը հանդիսացել է ռուսական բանակի գնդապետ Սամսոն Տեր-Պողոսյանը: Հայ կամավորական Վարդանին հաջողվում է հնարամտությամբ դուրս գալ թուրքական զորքերով ու քուրդ հրոսակախմբերով պաշարված Բայազետի բերդից՝ բերդաքաղաքին սպառնացող աղետի մասին լուր տալու ռուսական զորքերի հրամանատար Տեր-Ղուկասովին, ապա շտապում է ազատելու մեկի կյանքը, ով իր համար անսահման թանկ էր: Գաղթականների հետքերով որոնումները նրան տանում են Վաղարշապատ, և այդտեղ նա գտնում է իր սիրելիի՝ Լալայի գերեզմանը: Սյուժետային այս պատմության կենտրոնը տանուտեր Խաչոյի նահապետական գերդաստանն է, որը վեպի գեղարվեստական միջավայրն է: Տանուտեր Խաչոյի տանն են իրար հետ առնչվում գրեթե բոլոր հերոսները և այստեղ են ստուգվում առաջադրված հարցերն ու իրենց գաղափարական-փիլիսոփայական մեկնությունները: Ռաֆֆին մի առանձնահատուկ մանրամասնությամբ է նկարագրում Խաչոյի գերդաստանի ներքին կյանքը՝ աշխատանքի, վաստակի, ապրելակերպի, նիստուկացի մի կատարյալ համերաշխություն:

Ալաշկերտում խաղաղություն է տիրում, չնայած, որ մի կողմից քրդերն իրենց Ֆաթթահ Բեկի գլխավորությամբ անընդհատ կողոպտում էին հայերին, մյուս կողմից

[8] Չոպանյան Ա., Ռաֆֆի, «Երկեր», Եր., «Սովետական գրող», 1988, էջ 684:

Թոմաս էֆենդին՝ հարկեր հավաքողը, կեղեքում է յուրայիններին: Վարդանը սիրում է տանուտեր Խաչոյի աղջիկ Լալային, որին տղայի զգեստներ են հագցնում և Ստեփանիկ են անվանում: Նրան սիրում էին նաև Ֆաթթահ Բեկը ու էֆենդին: Թոմաս էֆենդու մեքենայությունների արդյունքում ձերբակալվում են Խաչոյի որդիները, Սալմանը, Վարդանը: Լալան փախուստի է դիմում: Թուրքերի կոտորածներից փրկվելու համար ամբողջ Ալաշկերտի գավառը գաղթի ճամփան էր բռնել, Լալան նրանց հետ միասին գաղթում է Վաղարշապատ, ուր և ծանր հիվանդանում ու մահանում է:

Ազգային ու անձնական ողբերգություններից խեղճացած Վարդանը երկար դեգերումներից հոգնած այլ բան չուներ անելու, քան գրկել Լալայի գերեզմանը և ողբալ առհավետ կորած իր սերը: Հենց այստեղ է, որ երազների աշխարհը նրան տեղափոխում է ապագա վերածնված Հայաստան: Բնաշխարհը կարծես ծանոթ էր նրան՝ նույն լեռները, գետերն ու հովիտները, սակայն ամեն բան միևնույն ժամանակ ուրիշ էր՝ ամեն տեղ շնչում էր կրթության ոգին իր ջերմ, կենսագործող զորությամբ: Վարդանը հայտնվում է մի ուրիշ, նոր Հայաստանում, որտեղ իր Լալան կենդանի է, իր հայրենիքը ծաղկում ու բարգավաճում է: Ահա, թե որն է մեծն վիպասանի պատգամը՝ նոր Հայաստան, լուսավոր Հայաստան, չհանձնվող, կրթված ու գլուխը բարձր Հայաստան:

Աներկբա է, որ «Խենթը» վեպը մեծ դաստիարակչական նշանակություն ունի և իսկական անսպառ գանձարան է ժամանակակից սովորողի համար իր հայրենիքը սիրելու, կրթության հարկն իմանալու, նենգ ու շահամոլ մարդկանց պատասխան տալու և չվստահելու տեսանկյունից:

Դիտարկենք «Խենթը» վեպի ուսուցման մեթոդական շղթան՝ հենվելով մեր մանկավարժական փորձի վրա:

Դասի թեման	Ռաֆֆու «Խենթը» վեպը
Դասի տիպը	Ամփոփման, գիտելիքների կատարելագործման դաս
Դասի կահավորումը	Ցուցապաստառ, բնագիր

Դասի նպատակները	• Տեքստի ընթերցում, գաղափարի ընկալում, նոր տեքստի ստեղծում: • Հատկանշավորել կերպարներին, դիտարկել վերջիններիս բարոյական նկարագիրը: • Տալ պատկերացում Ռաֆֆու «Խենթը» վեպի բովանդակության, սյուժետային առանձնահատկությունների մասին: • Ուսումնասիրել հեղինակի կիրառած լեզվաոճական կաղապարները: • Դասդասել կիրառված բառաշերտերը, բերել օրինակներ: • Ուսումնասիրել վեպի պատմական հենքը, ստեղծել միջառարկայական կապ:
Դասից ակնկալվող կարողունակություններ	• Ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն, • Լեզվական գրագիտություն կարողունակություն, • Սովորել սովորեու կարողունակության ձևավորում:
Վերջնարդյունքներ	• Հասկանա և վեր հանի տեքստի գլխավոր գաղափարը: • Տարբերակի տեքստում արտահայտված գաղափարների արդիականությունը և ժամանակագրությունը: • Ուսումնասիրի և մեկնաբանի գրողի կողմից օգտագործված բառապաշարը, հասկանա և վեր հանի խոսքի արտահայտչամիջոցների կիրառությունը միջավայր, տրամադրություն, կերպար ներկայացնելու նպատակով:

	• Համեմատի, զուգադրի և հակադրի տեքստերը, մեկնաբանի գրական կերպարը, բացատրի դրա զարգացումը: • Հաղորդակցվի և համագործակցի՝ ձևավորելով թիմային մտածողություն, լսի դիմացինին, հայտնի սեփական տեսակետը՝ հիմնավորելով և մեկնաբանելով այն, ձեռք բերի և կիրառի գրականագիտական գիտելիքներ: • Վերաբերմունք արտահայտի ստեղծագործության բարոյախրատական գաղափարի վերաբերյալ • Սովորի ճիշտ գնահատել ճշմարտախոսության, ազնվության դերը՝ հիմնվելով կերպարների գործողությունների վրա:

ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ

Դասն ամփոփելու համար ընտրվել է խճանկար ինտերակտիվ մեթոդը: Այս մեթոդի կիրառման ժամանակ աշակերտները համագործակցային խմբերով միևնույն թեմայի շուրջ աշխատում են առանձին ուղղություններով: Բոլոր խմբերի գործունեության արդյունքները միավորվում են և դառնում են ողջ դասարանի սեփականությունը: Այսպիսով՝ նյութն ուսումնասիրվում է հատվածաբար կամ տարբեր կողմերից, ապա պատկերն ամբողջանում է, երբ միավորվում են խմբային աշխատանքների արդյունքները: Մեթոդին բնորոշ հատկություններից է այն, որ սովորողները մեծ պատասխանատվություն են կրում միմյանց ուսումնառության համար, հանդես են գալիս և' սովորողի, և' սովորեցնողի դերերում:

Սովորողների ինքնուրույն հետազոտական գործունեություն

ԽՈՒՄԲ 1

1. Ուսումնասիրել Ռաֆֆու կենսագրությունը, ծանոթանալ նրա ընտանիքին, հավաքել տեղեկություններ:
2. Ուսումնասիրել Ռաֆֆու հասարակական գործունեությունը:
3. Ուսումնասիրել այն գրական ուղղությունները, որոնց դիմել է հեղինակը:
4. Բնութագրել Վարդան-հայրենասերին և Վարդան-սիրահարին:
5. Մտքերի քարտեզագրում մեթոդով կազմել Վարդանի կյանքի քարտեզը:
6. Հենվելով պատմության վրա՝ բերել փաստեր ժամանակի պատմական իրողությունների վերաբերյալ:
7. Նոր ու ապահով Հայաստանի Ձեր տեսլականը:

8. Կատարված ուսումնասիրությունների հիման վրա պատրաստել ցուցապաստառ և փոքրիկ հետազոտական աշխատանք:

ԽՈՒՄԲ 2

1. Ուսումնասիրել Ռաֆֆու «Խենթը» վեպի պատկերավորման միջոցները, լեզուն:
2. Վերլուծել Ռաֆֆու հասարակական գործունեությունը ժամանակի պատմաքաղաքական համատեքստում:
3. Առանձնացնել «Խենթը» վեպի գլխավոր և երկրորդական կերպարներին, բնութագրել մեկ բառով:
4. Կազմել տանուտեր Խաչոյի գերդաստանի տոհմածառը:
5. Փոքրիկ ուղերձ հղել Ստեփանիկին և Լալային:
6. Նոր ու ապահով Հայաստանի Ձեր տեսլականը:
7. Կատարված ուսումնասիրությունների հիման վրա պատրաստել ցուցապաստառ և փոքրիկ հետազոտական աշխատանք:

Սովորողներին կտրվի 30 րոպե ժամանակ հետազոտելու, տեղեկությունը համակարգելու, ստեղծագործելու համար: Աշխատանքի ավարտին խմբերը կներկայացնեն իրենց առաջադրանքը, խմբային քննարկումներով կամփոփեն:

Այսպիսով, վստահաբար կարող ենք պնդել, որ նմանօրինակ մեթոդական լուծումները մեծապես կարող են նպաստել սովորողների ինքնուրույնությանը, առանց ուսուցչի միջամտության և անմիջական օգնության տեղեկատվական հոսքերի կառավարմանը, հավաքագրած տեղեկությունների մշակմանն ու համակարգմանը: Աշխատանքի իրականացմանը զուգընթաց՝ սովորողներն հնարավորություն ունեն դրսևորել իրենց ստեղծարարությունը, առաջ բերել նոր գաղափարներ, նախաձեռնություններ, կիրառել իրենց ՏՀՏ հմտությունները, վերառարկայական կարողունակությունները՝ դրանց ավելացնելով նոր գիտելիքներ ու կարողունակություններ:

Եզրակացություններ

Աներկբա է՝ ուսուցչակենտրոն ուսուցումն այլևս ունակ չէ բավարարել ժամանակակից սովորողների կրթական կարիքները: Ողջ աշխարհում կրթական ոլորտը բարեփոխվում է. կրթական գործընթացի առանցքում դրվում են ուսուցման աշակերտակենտրոն մոտեցումները, ուստի կարծում ենք, որ, իրապես, ժամանակն է մեր երկրում նույնպես լրջագույնս մոտենալ իրականացվող բարեփոխումներին՝ ուսուցչակենտրոն ուսուցման մոդելը փոխարինելով աշակերտակենտրոնով: Ուսուցիչների ջանքերը, որոնք ուղղված են ուսումնական գործընթացի արդյունավետ ընթացքին, միշտ էլ արդարացված են: Դրական վերջնարդյունք ունենալու համար ուսուցիչը պետք է կանոնակարգի ու համակարգի իր աշխատանքը՝ անդադար քայլելով նոր մտքերի, կարողությունների, հմտությունների ու տեխնոլոգիաների հետևից: Սովորողների առաջադիմությունն ապահովելու համար ուսուցիչը պետք է բարձր գնահատի ակտիվ ուսուցման դերը, դասին հաճախ օգտագործի փոխներգործուն մեթոդներ, հետաքրքիր ու ճանաչողական խաղային հնարներ, ներառի ՏՀՏ բաղադրիչ: Այս ամենը ուսուցիչը պետք է կատարի, որպեսզի բարձրացնի դասարանում սովորողների առաջադիմությունը, հնարավորություններ ստեղծի առողջ մրցակցության համար:

Վերահաստատենք մեր պատրաստակամությունը ևս՝ ժամանակակից կրթական նորարարություններին ընդառաջ գնալու ակտիվ ու դինամիկ դասապրոցես ապահովելու տեսանկյունից, ինչին մեծապես կնպաստի նաև այս վերապատրաստումը, որի շրջանակներում, անշուշտ, կզինվենք նոր ու հետաքրքիր մեթոդամանկավարժական գիտելիքներով:

Օգտագործված գրականության ցանկ

1. Հանրակրթության մասին» ՀՀ օրենք:
2. https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788 ՀՀ Կառավարության որոշում:
3. ՀՀ Կառավարության՝ 08.04.2010 թվականի թիվ 439-Ն որոշում:
4. Ս. Պ. Մանուկյան, «Մանկավարժական և աշակերտական դասանպատակները», Երևան, 2003:
5. Սևակ Պ., Երկեր 3 հատորով, հատ. 3, Եր., «Սովետական գրող», 1983:
6. Ռաֆֆի, Պ. Հայկունու կրիտիկան և «Կայծերը»:
7. Չոպանյան Ա., Ռաֆֆի, «Երկեր», Եր., «Սովետական գրող», 1988:
8. Մասնակցային մշակույթ և կոմպետենցիաների վրա հիմնված ուսուցում, ռեսուրս գրքույկ, Երևան, 2020: